

## Մարզպետ Սարգիս Սահակյանն ընդունեց «Սեյվ դը չիլդրեն», կազմակերպության տնօրեն Արսեն Ստեփանյանին

22.10.2014

Հոկտեմբերի 21-ին մարզպետ Սարգիս Սահակյանն ընդունեց «Սեյվ դը չիլդրեն», կազմակերպության տնօրեն Արսեն Ստեփանյանին: Զննարկվեցին կազմակերպության հետ համատեղ գործակցության ինդիկատորները, առաջիկա ծրագրերը:

Ներկայացվեց վերջին տարիներին «Սեյվ դը չիլդրեն»-ի կողմից մարզում իրականացված ծրագրերը: Դրանք ներառել են ինչպես քաղաքային, այնպես էլ գյուղական համայնքները: Մարզպետ Սարգիս Սահակյանն առանձնացրեց Նիզավան համայնքի դպրոցում նորերս իրականացված ընդգրկուն ծրագիրը և նշեց եւս մի քանի գյուղական համայնքների դպրոցներում համանման նախագծերի իրականացման հնարավորության մասին: Նա իր պատրաստակամությունը հայտնեց կազմակերպության հետ առաջիկայում համագործակցությունը ընդլայնելու եւ ցանկացած նախաձեռնությանն աջակցելու վերաբերյալ:

«Սեյվ դը չիլդրեն»-ի տնօրեն Արսեն Ստեփանյանը նշեց մարզում իրենց գործունեության արդյունավետության մասին: Նա առաջարկեց համատեղ քննարկումներ կատարել իրենց առաջիկա՝ 2016-2018 թթ. ծրագրի կազմման մեջ օգտակար նախագծեր ներառելու վերաբերյալ: